

զինեգործութեան համար. կը պատուիրէ ընտիր զինիէ լեցնել «սակաւ յապակի հանապ, եւ զիր, կ'ըսէ, ի կարասն ի վերայ զինւոյն, այնպէս որ զերդ նաւ վերագայ» (116): Գաղ. hanap (բաժակ) բառն է, ծագած գերմաներենէ եւ անցած արաբերենի, որմէ մեք ալ առած ենք: Բարսղի մեկնիչը հոմանիշ կը համարի զայս տաշտի. «տաշտ՝ հանապ» (Լծ. Բրս. Գ), զոր կը հաստատէ Փիլոնի լուծման մէջ ալ՝ ըսելով. «տաշտն հանապ է<sup>1</sup>» (Լծ. Փիլ. Հես.): Տաշտին ձեւը, զոր պիտի տեսնենք աւելի ուշ (Գ, 4, Բ), կ'երեւի վաստակոց սա խօսքին մէջ եւս, «զերդ նաւ վերագայ»: Նոյն գիրքն անոր ընդունակութեան չափն ալ կու տայ՝ սոյն բացատրութեամբ. «կիսակոշ մի ընուս կամ հանապ մի» (43). ուրեմն երկուքը մէկ կամ զրեթէ մէկ չափ էին:

Չագար: Ծանօթ է մեր մէջ Գ դարէն իսկ, իբր հեղուկ նիւթերը նեղաբերան անօթոց մէջ փոխադրելու գործի. եւ այս պաշտօնով Լուսաւորչի տանջանարան եղաւ (ԱզԹ. 95): Անշուշտ զգալի տարբերութիւն ունեցած չէ այժմեան ձեւէն: Եւ

1. Այդ վկայութիւնքն՝ ազնուօրէն ծանօթացուց ինձ Տէր Ն. Բիւզանդացի: